— Այն փոքրիկ աղջիկի՞ց, որ մի պառաւի հետ ման է գալիս:

— Հէնց նրանից:

— Զարմանալի՜ աղջիկ է: Կէս ժամ առաջ մեր բակումն էր: Հարեւան կանայքը հաւաքոել էին նրա շուրջը, եւ նրանց համար գուշակութիւններ էր անում: Ես բոլորովին հիացած մնացի նրա սրամտութեան վրայ:

— Ձեր մասին գուշակել չտոեցի՞ք:

— Տոեցի, բայց նա նայեց իմ երեսին ու ասաց. «դուք թերահաւատութեամբ էք դիմում ոգիների դստերը. նա ձեզ համար գուշակել չէ կարող»: — Նա իրան ոգիների դուստր էր կոչում:

— Եւ իրաւ, դուք չէ՞ք հաւատում:

— Չեմ հաւատում: Բայց զարմանալին այն է, թէ ինչպէ՞ս նա հասկացաւ, որ ես չեմ հաւատում:

— Այդ շատ հեշտ էր հասկանալ:

Այդ միջոցին վարպետ Փանոսին կանչեցին իր գործարանը, մենք բաժանոեցանք նրանից, գնացինք մեզ համար պատրաստած սենեակը: Ասլանը իսկոյն դուռը ներսից կողպեց, մօտեցաւ լուսամուտին, մի քանի րոպէ հետաքրքրութեամբ նայում էր դիւթական գաւազանի վրայ: Յետոյ նա կամաց սեղմեց օձի գլուխը, որ հեշտութեամբ բաժանոեցաւ մարմնից: Այդ միջոցին նա դուրս քաշեց օձի փորից մի երկար թղթի փաթոթ, որի վրայ համարեա սպիտակ տեղ չկար, ամբողջապէս ծածկուած էր գրութիւններով: Այդ գրութիւնները նմանում էին այն թիլիսմանական ծածկագրութիւններին, որ պատրաստում են ջադուկները, եւ կանայք, գնելով նրանցից, ամփոփում են արծաթեայ փոքրիկ խողովակների մէջ եւ քարշ են տալիս իրանց պարանոցից: Իսկ տղամարդիկ իրանց գաւազանի փողի մէջ են դնում, յաջող ճանապարհորդութիւն ունենալու համար:

Բայց Հիւբբիի դիւթական գաւազանի փողի մէջ դրած թուղթը ոչինչ յաջողութիւն չէր խոստանում, որովհետեւ ես իսկոյն նկատեցի, որ նրա կարդալու միջոցին Ասլանը բոլորովին գունաթափոեցաւ: Կարդալուց յետոյ նա այրեց թուղթը: Երբ որ այրում էր, դա արդէն պարզ նշան էր, որ բովանդակութիւնը կասկածաւոր է:

— Մենք մատնուած ենք... — ասաց նա բաւական վրդովուած ձայնով: Ես սարսափեցայ: Նա ինձ հանգստացրեց, աւելացնելով.

— Այդ ոչինչ... ես այդ սպասում էի...

— Մենք պէտք է շտապենք իսկոյն հեռանալ այստեղից, — ասեցի ես: